ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

Ս/թ մայիսի 22-ին Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը Տեղ համայնքում կատարել է քաղաքացիների ընդունելություն:

Ընդունելությանը ներկայացել է 38 քաղաքացի:

Դրամական օգնություն ստանալու խնդրանքով դիմել էր տասնութ, աշխատանքի տեղավորման՝ երեք, մեքենայի գույքահարկի, կարի մեքենա ձեռք բերելու, տանիքի վերանորոգման, հողի վարձավճարի, շինարարական գործիքների ձեռքբերման, պատերազմում մնացած մեքենայի փոխհատուցման, մեքենայի տեխզննման, անասնագլխաքանակի փոխհատոցման, անասունների անկման, գյուղի համար տրակտոր հատկացնելու, համայնքի թանգարանի, սողանքից ճանապարհի քանդվելու, տարածք հատկացնելու, բնակարանի գնման համար փոխհատուցում տալու, վարկի մարման, համայնքի համար երաժշտական կենտրոն ձեռքբերելու, Ջերմուկի մատույցներում զոհված տղայի համար ընտանիքին դրամական աջակցության հարցերով՝ մեկական քաղաքացի:

Դրամական օգնության տասնութ դիմումներին տրվել է դրական լուծում:

Աշխատանքի տեղավորման դիմումները վերցվել են հաշվառման:

Մնացած խնդիրները մարզպետի հանձնարարությամբ, սահմանված կարգով ընթացք տալու նպատակով, քննարկվում են մարզպետի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումներում: Դրանց համապատասխան լուծումները իստակեցնելու համար նախատեսվում են լրացուցիչ ուսումնասիրություններ կատարել տեղում:

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմ